«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-936-16.04.2021-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

1. Նախագծի վերնագրից հանել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը:

2. Նախագծի 1-ին հոդվածում՝

1) «հոդվածը» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով.

2) լրացվող 1.11-րդ կետով առաջարկվող՝ «ուսուցման ազգային ռեեստր - ուսումնական ծրագրերի ու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման գործընթաց իրականացնողների և մասնակիցների տվյալների ազգային շտեմարան, որը ձևավորվում է մասնագիտացված ու գնահատված ուսուցումներ իրականացնելու, ոլորտի շահառուների համագործակցության հնարավորությունները ընդլայնելու, արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև ծառայությունների մասին տեղեկատվությունը թափանցիկ և մատչելի դարձնելու նպատակով» հասկացության ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ ինֆորմալ ուսուցումը կենսափորձի արդյունքում ձեռք բերված գիտելիքը, հմտությունն ու կարողությունն է, և ինֆորմալ ուսուցման գործընթացն իրականացնողների և մասնակիցների տվյալների ազգային շտեմարան անհնար է ստեղծել: Միաժամանակ նպատակահարմար չենք համարում հասկացության սահմանման մեջ նպատակի ներառումը, ուստի հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.11) ուսուցման ազգային ռեեստր - լրացուցիչ կրթության ծրագրեր իրականացնողների և մասնակիցների ազգային շտեմարան:».

3) 1.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ուսումնառության արդյունքների գնահատում և ճանաչում՝ կրթության բնագավառի կառավարման

պետական լիազոր մարմնի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգին համապատասխանության փաստի հաստատում՝ անկախ դրանք ձեռք բերելու եղանակից»:

3. Նախագծի 2-րդ հոդվածը հանել և դրանով նախատեսված դրույթները կարգավորել ենթաօրենսդրական ակտերով, իսկ որոշ կարգավորումներ արդեն իսկ նախատեսված են նախագծի 5-րդ հոդվածում:

4. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) 6.1-ին կետը «կարգը» բառից հետո լրացնել «ներառյալ պետական նմուշի վկայականի և դրա ներդիրի ձևը.» բառերով.

2) 6.2-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «ներառյալ պետական նմուշի հավաստագրի և դրա ներդիրի ձևը.» բառերով:»:

Միաժանակ պետք է հոդվածների համարակալումը վերանայել:

5. Նախագծի 5-րդ հոդվածում «հոդվածը» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով, «մասերով» բառը՝ «կետերով» բառով և «9.7-րդ» բառից հետո լրացնել «9.8-րդ» բառը:

6. Նախագծում անհրաժեշտ է նախատեսել եզրափակիչ և անցումային դրույթներ՝ դրանցում ամրագրելով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը, ինչպես նաև նախագծով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետները և օրենքի այն դրույթները, որոնք գործելու են տվյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ՝ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: